

Ս. Ղազարյան

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Միքայել Նալբանդյանը XIX դարի հայ հասարակական մտքի ամենա-
ալայծառ դեմքերից է. նրա անվան հետ են կապված հայ հրապարակախոսու-
թյան, գրաքննադատության և քաղաքական պոեզիայի լավագույն տրագիդիա-
ները:

Սակայն Մ. Նալբանդյանը ոչ միայն մեծ գրականագետ ու քննադատ, այլև
խոշոր տնտեսագետ ու փիլիսոփա էր, գրող ու լեզվաբան: Նա զբաղվել է բազ-
մազան հարցերով, որոնցից մեկը գրական հասկանալի լեզվի հարցն էր: Լեզվի
հետ էին կապակցվում ինչպես նոր գրականության հիմնադրման ու զարգաց-
ման, նույնպես և ազգի լուսավորության ու գոյության պահպանման խնդիրնե-
րը: Այդ պատճառով էլ լեզվի հարցով շահագրգռված էին հասարակական բոլոր
խավերը:

Անցյալ դարի 50-ական թվականներին, երբ Նալբանդյանը սկսում է իր
հասարակական-քաղաքական գործունեությունը, իր նպատակներից մեկը հա-
մարում է գրական լեզվի զարգացումը: Իր առաջին աշխատություններից մե-
կում՝ «Յաղագս հայկական մատենագրության» գործի մեջ նա ողջունում էր
Ս. Նազարյանցի «Արդապետարան կրօնի» աշխատությունը, որի «մի միայն
կէտ նպատակի է մշակել զանշէն մնացեալ բանականութիւնն ընդ նմին ազ-
նուագործելով և մշակելով զնորն բարբառ հասարակաց հասկանալի, առ ի
հնարաւոր կացուցանել զնա լինել յայտարար խորհրդոց մտածողացն»¹: Երվա-
տելով Նազարյանցի նախաձեռնությունը, նա խիստ կերպով նշավակում էր
Մխիթարյաններին, որոնք աչք փակելով ճշմարտության առաջ՝ արհամարհում
էին ժամանակի հայ հասարակության պահանջները և փորձում էին վերականգ-
նել ժողովրդին անհասկանալի և արդեն մեռած գրաբարը²: Նա պաշտպանելով
Նազարյանցի մտքերը, հայտարարում էր, որ «խորհուրդ նոր հայախօսութեան
չէր և չէ իսկ յաղարտ վարել զհիմունս հին հայկաբանութեան, քանզի եթէ յայս
կէտ ուղղեալ էր դիւր ընթացս, որ զնորախօսութիւն քարոզէր, սխալ էր չարաչար,
վասնզի աւերած բնականին և հնոյն ոչ կարէր սատար լինել կենդանութեան և
նորոգութեան նորոյն, որ ի շրթունս յածէր ռամկին տարածայն կերպարանաւո-
րութեամբ ըստ քաղաքաց և ըստ աշխարհաց»³: Հին լեզուն, շարունակում է
Նալբանդյանը, մեռած է և «չունի կեանք և կիրառութիւն յընկերական կենցաղս»,
հետևաբար՝ չի կարող պետքական լինել հայ ժողովրդին և դառնալ նոր գրա-
կանության լեզու: Ազգը միայն այն ժամանակ կարող է պահպանել իր գոյու-
թյունը և առաջադիմել, երբ ունենա իր գրականությունը նոր, բոլորին հասկա-
նալի լեզվով: «Ազգ չէ այլ ինչ, եթէ ոչ լեզու, առանց որոյ չէ մարթ լինել ազգի-

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 2, էջ 11:

² Նույն տեղում, էջ 15:

³ Նույն տեղում, էջ 16:

նա հոգի է ազգի, և ազգ մարդկան առհասարակ նովաւ կեայ. իսկ լեզու չոր և անծուծ, այլև թաղեալ ընդ փոշոյ հազարամէից, որպիսի է հինն լեզուն՝ ամենեւին անկարող է վերակենցաղել զբանականութիւն շնչասպառ»²։

Հայ շատ գործիչներ և առաջին հերթին Մխիթարյան միաբանութեան ներկայացուցիչները չկարողանալով հասկանալ հայոց աշխարհաբար լեզվի կրած փոփոխութիւնները՝ այն համարում են աղճատված, չմշակված և գրական լեզվի համար անպետք։ Մ. Նալբանդյանը դատապարտելով այդ հնամուլներին՝ գտնում է, որ աշխարհի բոլոր խոսակցական լեզուներն էլ գրականութեան լեզվի աստիճանին բարձրանալով կատարելագործվել ու հղկվել են դարերի ընթացքում. եթե «Իմաստունքն հայոց» չեն կարող այդ ճշմարտութիւնը ըմբռնել, թող գոնե ծանոթանան ռուսաց լեզվի պատմութեանը, որը կարող է ոչ միայն օգտակար լինել նրանց հասկանալու շատ հարցեր, այլև օժանդակելու մեր գրական լեզվի մշակմանն ու կատարելագործմանը։

Մ. Նալբանդյանը հայկական իրականութիւնը գնահատելիս և հայոց լեզվի հարցերը վճռելիս՝ ելնում էր ռուս առաջավոր գործիչներին՝ դրականութեան ու լեզվի մասին արտահայտած դրույթներին։ Նա ռուս պրոգրեսիվ գործիչների նման դատապարտում է հոգեւորականութեանը, որն իր ամբողջ գործունեութեամբ խանգարում էր ժողովրդի լուսավորութեան ու կրթութեան գործին, և առաջադրում է նոր հարցեր, պայքարում ժողովրդի լուսավորութեան դեմ հարուցված արգելքները վերացնելու համար։

Նույնիսկ նախահյուսիսափայլյան շրջանում, երբ դեռևս ձևավորված չէր նրա ռեւոլյուցիոն գաղափարախոսութիւնը, նա ավելի հանգամանորեն, քան ժամանակի հայ գործիչները, պայքարում էր աշխարհաբարը գրականութեամբ ամրացնելու և նրա մշակման սկիզբը դնելու համար, թեև աշխարհաբարի գոյութեան ու գրաբարի մահացման հարցերը լուծելիս տուրք էր տալիս լեզուների զարգացման բնա-փիլիսոփայական ուղղութեանը, լեզվի և բնութեան մարմինների զարգացման ու մահացման օրենքները նույնացնում էր, լեզուն, ինչպես բնութեան այլ մարմիններ, — ասում էր Նալբանդյանը, — ենթարկված է բնութեան կանոններին, և ինչպես բնութեան մարմինները, նույնպես և լեզուն «պիտո է մնա անմահ, բայց այս անմահութիւնը դարձյալ գործարանավոր մարմինների նման տեսնվում է հաջորդի մեջ և ոչ թե յուրյան իսկ ծերութեան հասակի հավիտենական շարունակութեան մեջ»³։

Սակայն տուրք տալով լեզուների զարգացման բնա-փիլիսոփայական տեսութեանը՝ Նալբանդյանը սահմանազատվում էր այդ ուղղութեան ներկայացուցիչներից և լեզուների զարգացմանը ցուցաբերում էր պատմական մոտեցում։ Նա լեզուն չէր կտրում ժողովրդից, լեզվի զարգացման հարցերը կապում էր հասարակ ժողովրդի լուսավորութեան ու կրթութեան և նոր, ժողովրդական հոծ պանգվածներին դյուրըմբռնելի գրականութիւն ստեղծելու խնդիրների հետ։ Նա կարծում էր, որ հայ ժողովրդի կրթութեան համար խոշոր նշանակութիւն կարող

¹ Այս նույն տեսակետը պաշտպանում է Նալբանդյանը նաև իր «Առում է լսվելու համար» հոդվածում, «Ազգը ինքն ինքն չէ, եթե չունի լեզու։ ... Ազգութիւնը աւելի յուր հոգին, այս հոգին լեզուն է։ Առանց այս լեզվին չկա ազգ»։ (Նույն անգում, էջ 408)։

² Նույն տեղում, էջ 20։

³ Նալբանդյան, Երկեր, հատ. 1, էջ 22։

է ունենալ դրականությունը, սակայն այնպիսի դրականություն, որը գրված է ժողովրդին հասկանալի լեզվով և ըմբռնելի բովանդակությամբ, սիրելի է ժողովրդին: «Թափառական հրեայի» առաջաբանում Նալբանդյանը գրում է. «Մինչև որ նոր լեզուն չլինի առհասարակ մատենադրական լեզու, մինչև գրվածների իմաստը ըմբռնելի և հասկանալի չլինի ժողովրդին, մինչև ազգը խոհեմ ճանապարհներով հոգս չառնե սեփական ազգային դպրոցների մասին և վերջապես, որ ամենից հարկավորն է, մինչև մեր պատվելի հեղինակները դպրոցական փառքը հետ դնելով ազգի համար չաշխատեն առողջամիտ կերպով, և մյուս կողմից ազգի կարողքը օգնության չառնեն նորանց, սուտ է ամենայն լուսավորություն»¹: Նալբանդյանը պաշտպանելով հայ նոր դրականությունը ժողովրդին հասկանալի լեզվով տալու պահանջը և ինքը դրա օրինակը տալով՝ գտնում էր, որ այդ լեզուն դեռևս մանուկ է, որ երկար ժամանակ է պետք նոր լեզվի հղկման ու կատարելագործման համար, որ հայ հեղինակները պետք է իրենց գրչի տակ ճախարակեն, մշակեն և «այրական հասակ» տան նոր լեզվին:

Հյուսիսափայլյան շրջանում Մ. Նալբանդյանը արդեն նոր սկզբունքներից ելնելով՝ ծավալում է իր դիտական գործունեությունը և հետևողական պայքար սկսում հայոց լեզվի և գրականության զարգացման համար: Նա տեսնում է, որ հայ հասարակությունը զարգացման նոր փուլ է թևակոխել, դուրս է եկել նախնադարյան վիճակից և ձևավորվում է իբրև ազգ, որի հիմնական հատկանիշներից մեկը ճիշտ կերպով նա համարում էր նրա լեզուն. «Ազգը ինքն ըստ ինքյան ազգ չէ, եթե չունի լեզու: Նա չի կարող «յուր գոյությունը և կյանքը հարատևե, կորուսանելով յուր պատշաճավոր մատենագրությունը և լեզուն»²:

Մ. Նալբանդյանը, ոտու XIX դարի պրոգրեսիվ գործիչների նման, լեզվի տեսական և գործնական հարցերը չէր անջատում միմյանցից, լեզվական յուրաքանչյուր կոնկրետ երևույթ քննում էր տեսական լայն ընդգրկումով և ամենաբարդ տեսական հարցերից հանում գործնական եզրակացություններ: Օգտագործելով լեզվաբանական գիտության նվաճումները և հասկապես ուս գիտնականների տեսակետները՝ ուսաց լեզվի տեսության և պատմության հարցերի մասին, նա գիտականորեն ապացուցում էր աշխարհաբարի անհրաժեշտությունը, ուրվագծում նրա մշակման ու կատարելագործման ուղիները: Դրան զուգընթաց նա հիմնավոր և հետևողական տեսակետներ է մշակում լեզուների նշանակության, հասարակական կյանքում նրանց կատարած դերի, լեզուների զարգացման, գրաբարի և աշխարհաբարի գոյացման ու փոխհարաբերությունների և այլ հարցերի մասին:

Մ. Նալբանդյանը հայ իրականության մեջ առաջինն էր, որ պարզ պատկերացնում էր լեզվի հասարակական էությունը, ճիշտ կերպով նշում, որ լեզուն ունի «կյանք և գործածություն ընկերության մեջ»³, որ առանց լեզվի հասարակությունը չի կարող պահպանել իր գոյությունը, որ «Պիտո էր ազգի հետ մտածել և խոսել այն լեզվով, որ նորսն հասկանալի էր»⁴: Նալբանդյանը բացահայտելով լեզվի հասարակական բնույթը՝ հատկապես ընդգծում էր նրա գլխավոր ֆունկցիան՝ հաղորդակցական հիմնական միջոց լինելու հանգամանքը. «Մենք որչափ կարողացել ենք քննել և ճանաչել, հասկացել ենք, որ մարդուս լեզուն

¹ Նալբանդյան, Երկեր, հատ. 2, էջ 66:

² Նույն տեղում, էջ 408:

Նույն տեղում, էջ 404:

Նույն տեղում, էջ 403:

այն ժամանակ կարող է խոսել, ինչ ժամանակ միտքը արդեն խոսելի բանը դասավորում է, պատճառ որ խոսքը, որ ձայնավորված լսվում էր օդի մեջ մեր բերանից, մեր իսկ մտքի ծնունդն էր։ Լեզվի պաշտոնը այստեղ այս էր, որ մեր մտքով հասկացածը նա լսելի շինե օդի միջնորդությունով ուրիշներին¹։ Լեզուն մտքի թարգմանն է, «մտքի ծնուցածը» ուրիշներին հաղորդող, հետևաբար այն հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալիս մարդկանց հոգալու իրենց պետքերը, շարունակելու իրենց գոյությունը, պահպանելու ազգը, որ «է այն ուժը, այն կենդանի կապակցությունը մարդերի, որ առանց նորան, կա՛մ նորանից դուրս, մասնավոր մարդը կը լիներ մի անօգուտ անձնասեր — ЭГОИСТ, իսկ բոլոր մարդկությունը մի անպտուղ վերացականություն»²։ Մ. Նալբանդյանը, լեզուն համարելով ազգի բնորոշ հատկանիշներից մեկը՝ նրա իրավունքների պահպանման ու զարգացման համար տարված աշխատանքը չէր անջատում ընդհանրապես հայ ազգի ազատագրություն, լուսավորության ու կրթության խնդիրներից։ «Երկրագործությունը որպես ուղիղ ձանապարհ» աշխատության մեջ նա ավելի խորացնելով ազգի ու նրա լեզվի զարգացման մասին ունեցած տեսակետները, ասում էր՝ «Պահի՛ր քո ազգությունը, հաստա՛տ կացիր քո սիրու մեջ դեպի քո աշխարհը, սիրի՛ր քո եղբայրքը, պահի՛ր քո լիզուն, որ է քո ավգության դուռը և այդ բոլորը քեզ իրավունք կտան մի կտոր հող ձեռք բերելու, որով կապալիս ստրկությունից և աղքատությունից»³։

Մ. Նալբանդյանը մեծ նշանակություն էր տալիս հայ ազգի կրթության ու լուսավորության գործը կազմակերպելու և աշխարհաբարի մշակման ու զարգացման բնագավառում «Հյուսիսսփայլի» կատարած դերին։ «Հյուսիսսփայլի» 1860 թ. № 11-ում Սարգիս Վարշամյան ստորագրությամբ տպագրած իր հոդվածում նա դրվառում է հայ հասարակական և կուլտուրական կյանքի զարգացման ու աշխուժացման համար «Հյուսիսսփայլի» ունեցած հսկայական նշանակությունը։ Նա այդ հոդվածում նշում էր, որ հայկական նոր գրականությունը 1858 թվականից պետք է սկսի իր առաջին շրջանը. այդ թվականին լույս տեսավ «Հյուսիսսփայլը», որը չի կարելի համեմատել ոչ մի այլ հանդեսի հետ, որովհետև, ասում է Նալբանդյանը, «ոչ մի օրագիր ոչ մի ազգի մեջ այնքան ազդեցություն չի տրած գրականության վրա, այնքան բարի պտուղներ չէ բերած այդպիսի կարճ միջոցում, որքան այդ բազմարդյուն օրագիրը, որ հյուսիսից փայլելով, մի ամենևին նոր լույս թափեց մեր կենդանի բարբառի վերա, առաջին և քվիսավոր պատճառ դառնալով կենդանի ազգի մեջ կենդանի լեզվով խոսելու և գրելու»⁴։

Նալբանդյանը, հանդես գալով իբրև հայոց ազգային լեզվի անշահախնդիր պաշտպան՝ հայտարարում էր, թե «ազգի մեծակշիռ իմացական օգուտներից միևնր մենք համարում ենք մեր կենդանի լեզվի մշակադործությունը և նորա մաքրության պաշտպանությունը։ Ուրեմն Հյուսիսսփայլը մեր կարծիքով պարտական է անքուն հսկել ոչ միայն յուր լեզվի հստակության և պատվականության վերա, այլև հանձն առնուլ, ինչքան հնարավոր էր, անաշուղտապես ցուցանել մյուս օրագիրներին, որպես յուր կրտսեր եղբայրների թե՛ արժանավորությունը և թե՛

¹ Մ. Նալբանդյան, *Երկեր*, հատ. 2, էջ 409—410։

² Նույն տեղում, էջ 257։

³ Նույն տեղում, հատ. 3, էջ 91։

⁴ Նույն տեղում, հատ. 2, էջ 296։

սլակասությունը»¹ Բայց նա գտնում է, որ «Հյուսիսամիայլը» ինչպես հարկն է չի քննադատել այդ օրագրերի լեզուն, և վրդովված հայտնում, որ եթե «Հյուսիսամիայլը» կարծում է, թե «Ծռաքաղը» քննադատության առարկա չի կարելի դարձնել, դրանում իրեն համարում է անպարտ Մյստեղ որոշակիորեն նա դատապարտում է Նազարյանցին, որը հաշտվողական գիծ էր տանում, միշտ զիջելով հոգևորականությանը ու ֆեոդալական հարաբերությունների հետ կապված ինտելիգենցիային: Այդ է պատճառը, որ Նազարյանցը հայտարարում է «Ամենևին աչքս, որովհետև Հյուսիսամիայլի հրատարակողը ավելի մեծակշիռ գործեր ունի լցուցանելու, քան թե մի աղճատախոս, անհյուսիս ու անծուծ օրագրի վերա խոսք ու զրույց քանալուն»²: Նալբանդյանը՝ մեջ բերելով 1856 թ. Մսեր Մսերյանցի հրատարակած «Յիշատակարան լազարեանց տոհմի» գրքի առաջաբանից այն քաղվածքը, որի մեջ գրված է, թե «ի մատենագրությանս յայսմիկ՝ զգրոցն, այն է՝ զհինն, զկանոնաւորն և զհարազատն մեր ի կիրարկի բարբառ, և ոչ զնորն չմշակեալ, իմա զռամկացն՝ զկողմանց կողմանց զաշխարհիկն անուանեալ՝ աղխազուր լեզու. զի որչափ համեղական և ազդոյ և գեղեցիկ տառաչինն է, այնչափ անհամ է վերջինն, թոյլ, տգեղ, անհեթեթ, և զուրկ միանգամայն ի կարի կարևորացն կանոնացն ուղղախօսութեան, որպէս և շարք իսկ ոչ յաննշանից արանց՝ որ քաջահմուտք լեզուիս ճանաչին, վկայեն անաշտապէս»³, ավելացնում է. «Մենք չհասկացանք թե ինչ պատճառով զրահավորվել էր նա այնքան հայհոյական ածականներով ընդդէմ յուր մայրենի լեզվին... Բող ներեմեզ պատվելի մագիստրոսը. մեք այդ խնդրի մեջ կարող չենք ընդունել ոչ նորահեղինակությունը և ոչ անաշտ վկայությունը նորա «ոչ աննշան արանց». պատճառ, ամենայն ընթերցող և մտածող հայ սրտի վկայությամբ խոստովանում է, որ աշխարհիկ անվանյալ լեզուն, չմշակված դեռևս, ոչ թե միայն չէ «անհամ, թույլ, տգեղ, անհեթեթ և զուրկ կարի կարևորացն կանոնաց ուղղախօսութեան», այլև կարող է փոխ տալ մեռած գրաբարին և համ և ազդվություն և գեղեցկություն և ուղղախոսության կարի կարևոր կանոններ: Մեր խոսքին հավատալու համար, խնդրում ենք պատվելի մագիստրոսից յուր խրթին հայկաբանության բարձրությունից մի փոքր ցած իջանել և առանց կանխակալ դատողության, մտադրությամբ կարդալ և Արովյանի «Վերջ Հայաստանի» վեպը և մեր այժմյան օրագիրները»⁴:

Ատ. Նազարյանցը, չհամաձայնելով նամակագրի հետ, մեղադրում է նրան և գտնում, որ նամակագիրը չի ուսումնասիրել խնդիրը, որ տեղյակ չէ շատ հարցերի և գործում է այնպես, ինչպես թելադրում է նրան «յուր կույր ախտը, յուր թշնամությունը և ատելությունը դեպի այս և այն ոք»⁵: Սակայն Նազարյանցը մեղադրանք է հարուցում Նալբանդյանի դեմ առանց լուրջ հիմքերի: Նալբանդյանը երբեք էլ չէր գործում «կույր ախտի» թելադրանքով, նա, ինչպես ցույց են տալիս բոլոր փաստերը, միայն նկատի ունեն հայ ազգի, այսինքն՝ հասարակ ժողովրդի շահերը: Նազարյանցին գուր չէր գալիս ռամկի լեզուն, որովհետև, նրա կարծիքով, նա «անկապ է և անհոր»: Նա որոշակիորեն հանդես է դալիս Նալբանդյանի ուղղության դեմ և ստանձնում է գրաբարի պաշտպանի և նոր լեզուն

¹ Մ. Նալբանդյան, հատ. 2, էջ 296:

² Նույն տեղում, էջ 434:

³ Նույն տեղում, էջ 297—298:

⁴ Նույն տեղում, էջ 298—299:

⁵ Նույն տեղում, էջ 435:

նրա ազդեցությամբ մշակելու ցանկությունները արտահայտողի դերը։ Նա չի հանդուրժում Նալբանդյանի հատու ոճը, նպատակասլաց արտահայտությունները, հայոց ազգային լեզուն ժողովրդական լեզվի հիմքի վրա մշակելու պահանջը։ Նրանք տարբեր կերպ էին ըմբռնում ազդեցություն լեզուն հասկացությունները։ Նազարյանցը «Հին լեզվի բոլոր պատվական նյութը գործ» դնելով «նոր աշխարհաբարի մեջ, հետևելով լեզվի ընդհանուր լոգիկային և դուրս ձգելով ռամկական» ձևերը՝ ձգտում էր «հայոց աշխարհաբարը խելացի, բազմազգույն մշակության տակ» դնել այնպես, որ ոչ մի բանով պակաս չլինի հնից և համապատասխանի «եվրոպական մտածողությանը»։ Այդ սկզբունքներից ելնելով՝ նա արդարացնում էր Մ. Մսերյանցին իր դիրքը աշխարհաբարով չգրելու համար. «Այժմ գալիս ենք քրքրելու այն ածականների խորհուրդը, որ մեր պատվելի մագիստրոս Մսեր Մսերյանցը, բարդում է «այն նոր, չմշակված, ռամկականների աշխարհիկ ասած» լեզվի վերա, և այդպես չէ կամեցել (գուցե համարձակվել չէ) այդ անարժան լեզվով մատենագրել յուր հիշատակարանը, նախապատիվ համարելով գրոց համեղական, ազդու և գեղեցիկ կանոնավոր բարբառը։ Մենք համաձայն ենք Մսեր Մսերյանցին, որ տգետ ռամկանների լեզուն թույլ, տգեղ, անհեթեթ և անկանոն է. կարող չէ ևս լինել այլապես. այլև, ինչպես շատ տեղ մեր գրվածքների մեջ ասած ենք, նույնպես վայրենացած, ինչպես բազմությունը, ուրեմն և անհնարին մատենագրել այդ լեզվով ազգի դաստիարակության և լուսավորության համար»¹։ Նազարյանցը, հրաժարվելով ռամկիկ լեզվից, պահանջում էր, որ գրաբարը իր անաղարտ գրությամբ չգործածվի. «Խնդիրը, մեծ և կարևոր խնդիրը, — ասում է նա, — այն էր և է, որ հրաժարվելով բազմության վայրենացած լեզվից, մշակվի փոքր ի շատե մաքուր մնացած և քաղաքացի հասարակության մեջ գործածական աշխարհաբարը, որ դորանով այժմյան սերունդը ստանա մի հարմարավոր գործի կրթության և լուսավորության»²։ Սակայն այդ հարկավոր գործիքը չպետք է խիստ կերպով տարբերվի գրաբարից, նա պետք է լինի միջին ճանապարհը, որով հնարավոր լինի «մի կամուրջ բանալ անցած օրերի և ներկայիս մեջ»³։ Նազարյանցը չէր ցանկանում իր կապերը խզել անցյալից և ամեն կերպ աշխատում էր չխորտակել այն կամուրջը, որը նա ձգել էր հնի և նորի միջև։

Նալբանդյանը, ինչպես երևում է իր նամակից և Նազարյանցի ծանոթություններից, 1860 թվականին արդեն բացորոշ և առանց որևէ վերապահումի հանդես էր գալիս Նազարյանցի տեսակետների դեմ և ավելի վճռական կերպով էր առաջ քաշում հարցերը։ Նալբանդյանը ճիշտ էր մոտենում լեզվաբանական շատ կնճոտ հարցերի և սպառիչ պատասխան տալիս դրանց։ Այդ տեսակետից շատ բնորոշ են գրաբարի և բարբառների առաջացման ու հնության մասին արտահայտած կարծիքները։ Նա հիշյալ նամակում, շարունակելով Մսերյանցի քննադատությունը, գրում էր. «Պատվելի Մագիստրոսը և նորա ոչ աննշան և քաջահմուտ հայկաբանները երբ և որպիսի փաստերով հաստատեցին, թե հինգերորդ դարու գրոց լեզուն եղել է Հայաստանի հին լեզուն, և մեր ժամանակակից կենդանի ազգի բարբառը որչափ հեռացել է գրոց լեզվից, այնչափ խանգարվել է և տղեղացել է։ Սորա հակառակ կարելի է ասել, որ այժմյան ժողովրդի լեզուն գրոց լեզվից առաջ է եղել, և որչափ գրոց լեզուն հեռացել է ազգի

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 2, էջ 436։

² Նույն տեղում, էջ 436—437։

Նույն տեղում, էջ 437։

կենդանի լեզվից, այնչափ կորուսել է. յուր սկզբնական հատկությունը, ստրկանալով այլ մերձավոր ազգերի լեզուների ազդեցության: Այս երկու կարծիքները համադրո են. պատճառ ոչ միևնույն ուղղության հաստատած չէ հիմնավոր փաստերի վերա: Մեք ընդունում ենք երկրորդ կարծիքը, հակառակ քաջահմուտ հայկաբաններին»¹: Նալբանդյանը, այսպիսով, շեշտակի հարվածում է Նազարյանցին՝ «քաջահմուտ հայկաբանի» կարծիքին հակառակ տեսություններ զարգացնելով:

Ստ. Նազարյանցը, ընդունելով բարբառների գոյության փաստը դրական լեզվի կողմին, դտնում էր, որ լեզուն իր սկզբնական շրջանում մեկ է եղել, որ հայոց «ռամիկ լեզուն» առաջացել է այն լեզվից, որը մատենագրական լեզուն է դարձել, որ կենդանի լեզուն... «պիտո է հեռանար գրոց լեզվից, պիտո է խանգարվեր և տգեղանար, ազգի դրության համեմատ և ոչ թե, ինչպես ասում է մեր նամակագիրը, գրոց լեզուն է հեռացել ազգի կենդանի լեզվից և այդպես կորուսել է յուր սկզբնական հատկությունը»²: Երկու միմյանց հակադիր կարծիքներ. Նալբանդյանը ելնում էր այն սկզբունքից, որ գրաբարը հեռացել է ժողովրդական խոսակցական լեզվից, իսկ Նազարյանցը՝ հայ ժողովրդական լեզվի սկզբնական վիճակը գրաբարը համարելով՝ գտնում էր, թե ժողովրդական լեզուն է հեռացել գրաբարից: Նալբանդյանը, որդեգրելով ռուս առաջավոր մտածողների տեսակետները, հաղթահարում է ժամանակի բուրժուական լեզվաբանության սահմանափակությունը և հայոց լեզվի զարգացման ու փոփոխման շատ հարցերի վերաբերյալ ճիշտ կարծիքներ է արտահայտում: Նա, ինչպես ասացինք, չի հանդուրժում աշխարհաբար լեզվի նկատմամբ ցուցաբերած արհամարհական վերաբերմունքը և իրեն հատուկ հետևողականությամբ ու կրքոտությամբ պայքարում է բոլոր նրանց դեմ, որոնք, մերժելով աշխարհաբարը, պրոպագանդա էին անում գրաբարի համար կամ աշխատում էին աշխարհաբարը ենթարկել գրաբարի ազդեցությանը:

Մ. Նալբանդյանն իր լեզվաբանական հայացքներով ավելի կատարյալ ու հետևողական է հանդես գալիս Պետրոպավլովյան բերդում գրած աշխատությունների և նամակների մեջ: Նա իր այդ շրջանի ստեղծագործությունների՝ հատկապես «Կրիտիկա» «Սոս և Վարդիթերի» և «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» աշխատությունների մեջ ամփոփում է հայոց նոր լեզվի մասին տարբեր առիթներով արտահայտած կարծիքները և ավելի հիմնավորապես խոսում հայոց լեզվի զարգացման տարբեր շրջանների, հայ հասարակության կյանքում նոր հայերենի կատարած գերի, նրա կատարելագործման ու մշակման ուղիների մասին: Նա վերոհիշյալ աշխատություններում և այդ շրջանի գրած իր նամակներում, անդրադառնալով ազգի կյանքում լեզվի կատարած գերին, ճիշտ կերպով նշում է, որ լեզվի զարգացման ու կերպարանափոխության ընթացքը կապված է հասարակության, ազգի պատմության հետ, որ հասարակության կյանքում կատարված փոփոխությունները արտացոլվում են լեզվի մեջ, որ լեզուն չի կարող «կազմվել կամ փոխվել մի անհատի կամ խմբի ցանկությամբ, կամքով»³, այլ նա փոփոխվում է դարերի ընթացքում ամբողջ հասարակության մասնակցությամբ: Լեզուն համարելով ամբողջ ազգի

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 2, էջ 299:

² Նույն տեղում, էջ 438:

³ Նույն տեղում:

սեփականությունը, նա պաշտպանում էր ազգի պահանջները բավարարող կենդանի լեզուն հասարակության լուսավորության միջոցը դարձնելու անհրաժեշտությունը. ազգի զարգացման համար կարող է ծառայել միայն այն լեզուն, որ կենդանի է, որ «ժամանակների պիտույքին հարմար լցնում էր իր պաշտոնը»¹. որը հավատարիմ է «ժողովրդի լեզվի բաղդասությունը» և ունի «ժողովրդին հայտնի» քերականական օրենքները²: Ընթեր՝ Նալբանդյանը պարզ տեսնում էր հայոց նոր լեզվի այդ օրենքները և խիստ կերպով պախարակում այն մարդկանց, որոնք կարծում էին, թե աշխարհաբարը աղավաղված է, ավերված և չի կարող դառնալ գրական կատարյալ լեզու և բավարարել ազգի պահանջները: Նալբանդյանը, ելնելով ժամանակի և հատկապես ուսական լեզվաբանության նվաճումներից, ճիշտ կերպով նշում է, որ հայոց լեզուն և նրա տարբեր բարբառները շարահյուսության միևնույն կանոններն ունեն: Այդ կանոնները ոչ թե դրաբարի աղավաղված օրենքներն են, այլ ձևավորվել են պատմականորեն, որովհետև հասարակության լեզուն, «ընկերության բարբառը կերպարանագործվել է աշխարհագրական և բնության ազդեցության տակ, պատմական դեպքերը չեն անցել նորա վրայից առանց իրենց հետքը խոր դրոշմելու»³: Հետևաբար չի կարելի զարգացած և կատարյալ համարել գրաբարը, իսկ «աղճատված» նոր լեզուն. «Ոչ դրական կատարելություն կա և ոչ դրական ավերանք մի լեզվի, որ ժամանակների պիտույքին հարմար լցնում էր իր պաշտոնը»⁴: Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի հաղորդակցման իր հատուկ միջոցները և «տղայական շնչին և խելացնոր բաներ են», երբ տարբերություններ են դրվում «տուր ինձ զհաց» կամ «տուր ինձ հաց», «երթալ ի տուն» — «տուն երթալ» ձևերի մեջ և մեկը համարել կատարյալ, իսկ մյուսը՝ ավերանք. «Լեզվի խորհուրդը ձևի մեջ չէ, այլ իրի մեջ. եթե ես «հաց տուր ինձ» ասելով հասկանում եմ այն, ինչ որ 4000 տարի առաջ հասկանում էին «տուր ինձ զհաց» ասելով, լեզուն կատարում է իր պաշտոնը լիքը չափով»: Այդ նշանակում է, որ չի կարելի բռնադատել ժամանակակից մարդու իրավունքները և սուրբել նրան փոխելու իր մտածելակերպը և մտքերը արտահայտելու միջոցները: Նալբանդյանը գրաբարը և աշխարհաբարը համարում էր հայ ժողովրդի զարգացման տարբեր շրջանների պատմականորեն ձևավորված այնպիսի լեզուներ, որոնք և՛ իրենց բառապաշարով, և՛ քերականությամբ այնքան են հեռացել միմյանցից, որ երբեք չեն կարող համադրվել կամ փոխարինել իրար: Հին լեզուն արդեն ապրել է իր դարը, նա կարողացել է լրիվ չափով հոգալ հայ ժողովրդի պետքերը միայն անցյալում և այժմյան հայը չի կարող ետ դառնալ, կամ հրաժարվել իր իրավունքներից. «Ինչ իրավունք որ ունեն անտիկյան հայը խոսել հին լեզվով, հին ոճով, հին քերականությամբ, նույն իրավունքը իր կարգով ունի և այժմյան հայը խոսել նոր լեզվով, նոր ոճով և նոր քերականությամբ: Մերժել այս իրավունքը համազոր է պատմության և ժամանակի ազդեցությանը տգիտանալու, բռնաբարել նոր լեզուն, որ նա աճի հին ձևի ազդեցության տակ, համազոր է պատմության ժամանակի ազդեցությունը և իրավունքը մերժելու: Մեռածը մեռած է, անցածը անցած. կենդանին և ներկան, կենդանի և

1 Մ. Նալբանդյան, հրկեր, հատ. 3, էջ 322.

2 Նույն տեղում, էջ 312.

3 Նույն տեղում, էջ 196.

4 Նույն տեղում, էջ 166.

ներկա ժողովրդի սեփականությունն է. և անխելի՝ սեփականությունը»¹, Հին լեզուն անցել է, որովհետև նրա ժամանակներն էլ անցել են, իսկ «հնության ավտորիտետը ժամանակի և պետքերի իրավունքը հափշտակելու շափ ուժ չունի»², Հին լեզուն իր ոչ մի հատկանիշով չի կարող առավել լինել նոր լեզվից, նրա «ջատագույնը գեղեցկությունը, նորա ավելի մշակված լինելը»³. նույնպես իրավունք չեն տալիս մեզ արհամարհելու կենդանի ժողովրդի պահանջներն ու կարիքները, հաշվի չառնելու պատմական գեպքերը, ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները:

Մ. Նալբանդյանը, ելնելով Չերնիշևսկու գեղեցիկի մասին արտահայտած մատերիալիստական տեսակետներից, գտնում էր, որ բացարձակ գեղեցկություն չկա, որ հասարակության կյանքի պայմանների փոփոխման հետ փոխվում են նրա սովորությունները, հայացքները, հետևաբար նաև գեղեցիկի նկատմամբ ունեցած պատկերացումները: Գեղեցկությունը չպետք է այս կամ այն լեզուն ընդունելու կամ մերժելու հիմքը հանդիսանա, քանի որ նա հարաբերական է. «Հին լեզվի գեղեցկության իրավունքը գեղեցկության և այս կատեգորիայով չի կարող հաղթել նոր լեզվի իրավունքին: Պատճառ, տգեղ երևացածը չի տանում ժամանակը, իսկ նոր լեզուն գնում է ժամանակի հետ զուգահեռաբար, ուրեմն նոր լեզուն տգեղ չէ: Սորան հակառակ գեղեցիկ համարվածը չի թողնում ժամանակը, իսկ հին լեզուն վաղուց թողել է նա, ուրեմն նորա համար հին լեզուն գեղեցիկ չէ»⁴, Ինչպես գեղեցկությունը, նույնպես և լեզուն ունեն իրենց չափանիշը. գեղեցկության չափանիշը բնությունն է, իրական կյանքը. լեզվի գեղեցկության չափանիշը նույնպես կյանքն է, բայց լեզվի ու հասարակական մյուս երևույթների միջև տարբերություն կա, եթե արվեստի մեջ գեղեցկության չափանիշը, «գեղեցկության մոտավոր սահմանը բնության մոտ լինելը, կամ բնության նմանվելն է»⁵, ապա լեզվի գեղեցկության չափանիշը, նրա բնությունը, միտքն է. «Լեզվի ձևի վերաբերմամբ մտքի ձևն է բնությունը: Պատճառ, միտքը և նորա ձևը կերպարանագործվում են մարդու մեջ բնության ազդեցությամբ կամ անմիջապես, կամ կյանքի միջնորդությամբ, որ առաջանում է բնական պայմանների վերա: Ինչպես բնությունն է, ինչպես մարդու շրջապատող աշխարհն է, այնպես կլինի մարդու կյանքը և ինչպես կյանքը, նորա համեմատ կլինի միտքը: Եվ լեզուն, որ ուրիշ բան չէ, եթե ոչ մտքի հայտարարը, բնականապես պիտի նմանվի մտքին, նորա ձևը ուրիշ բան չի կարող լինել և չպետք է լինի, եթե ոչ մտքի ձևի ցուացումը: Սորանից պարզ երևում է, որ գեղեցկություն խոսքը, լոկ անզոր խոսք է, եթե գործ է դրվում հին լեզվի իրավունքը ջատագույնելու համար»⁶: Մ. Նալբանդյանը, ինչպես ասվեց, ընդգծելով լեզվի և մտքի, այսինքն՝ մտածողության միջև եղած սերտ կապը և ցույց տալով նրանց պատմականությունը՝ լեզուն չի նույնացնում հասարակական այլ երևույթների հետ և գտնում է, որ նա այնպիսի արագությամբ չի կերպարանափոխվում, ինչպես ասենք մարդու ճաշակը և սովորությունները, այդ պատճառով լեզվի գեղեցկությունը նրա արտաքին, տեսանելի հատկանիշները չեն, լեզվի գեղեցկությունն արտահայտվում է հասարակական կյանքում

¹ Մ. Նալբանդյան, հատ. 3, էջ 322.

² Նույն տեղում, էջ 323.

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 325.

⁵ Նույն տեղում, էջ 324.

⁶ Նույն տեղում, էջ 326:

նրա կատարած դերի մեջ, եթե տվյալ լեզուն քավարարում է հասարակության պահանջները, հոգում նրա «բոլոր պետքերը», ծառայում է նրա «բովանդակ կյանքին բոլոր պետքերին միահամուռ և ոչ մասնավորապես այս կամ այն հոգեկան ցանկության»¹։ ապա նա հասարակության համար գեղեցիկ է, ընդունելի։ Եվ որովհետև հին լեզուն ժամանակին կատարել է այն դերը, ինչ որ այժմ կատարում է նոր լեզուն, այդ պատճառով էլ նա շունի կարծեցյալ մեծ իրավունքներ և ավելի գեղեցիկ չէ նորից։ Նոր լեզուն ունի իր թերությունները, որովհետև նա դեռևս գրական մշակման չի ենթարկվել, բայց այդուհանդերձ նա իր մեջ ունի այնպիսի ձևեր ու բառեր, որ հին լեզուն չէր կարող ունենալ։ Նոր լեզվի թերությունները չեն մնա, նրանք կվերանան, երբ գրական մշակման ենթարկվի նա, երբ ազգի ճարտար հեղինակները, գրի առնելով հայերենը, կամաց-կամաց կսեղմեն և կճշտեն նրա «ձևերը կամ ոճերը»։ Այդ բոլորը մի օրում կամ մի տարում չեն լինի, բայց անպայման կլինեն և հայերենը կդառնա զարգացած ու հղկված լեզու։

Հայոց լեզվի մշակման ու կատարելագործման հարցերը սերտորեն կապելով լեզվի ապագայի, ժողովրդի հոծ զանգվածներին հասկանալի մնալու, նոր մատենագրության զարգացման և ժողովրդի կրթության ու լուսավորության հարցերի հետ, նախանշյալն ընդգծում էր գրաբարը գրականության լեզու դարձնելու պահանջի անհեթեթությունը և հաստատելով աշխարհաբարը իր իրավունքներում, նշում նոր հայերենը մշակելու սկզբունքները։

Ամենահիմնական հարցը, որ նախանշյալը դնում էր ժամանակի հայ ինտելիգենցիայի առաջ, լեզուն ինքնուրույնաբար մշակելու պահանջն էր։ Այդ պահանջի համաձայն, լեզուն մշակելիս՝ ոչ թե պետք է ղեկավարվել գրաբարի կամ որևէ տեղական բարբառի զարգացման օրինաչափություններով, այլ լեզվական այն ընդհանուր կանոններով, որոնք չէին հակասում ժողովրդի տվյալ շրջանի լեզվամտածողությանը և հասկանալի կարող էին լինել հայ ժողովրդի բոլոր հատվածներին։ «Նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խպնելու և առանց այս կամ այն գավառական բարբառին ստրկանալու»²։ Յուրաքանչյուր հեղինակ պետք է հետևի իր լեզվին և իմանա լեզվի հիմնական կանոնները և չչեղվի նրանցից։ Միայն այն ժամանակ հեղինակը կարող է որևէ ազդեցություն ունենալ ժողովրդի վրա, երբ «մի կանոնով առաջնորդվի»³։ երբ հասկանա, որ «լեզուն ժամանակի արդյունք է և մշակվում է ժողովրդի ամբողջության և քաղաքակրթության համախառն»⁴։

Հեղինակի պարտականությունն է ժողովրդի լեզվի շարահյուսությանը հավատարիմ մնալ, և «հին կամ օտար լեզուներից առնված բառերը ժողովրդին հայտնի օրենքներով կապակցել»⁵։ Նախանշյալն այդ պահանջները դնում է ժամանակի հայ հեղինակների առաջ, որովհետև պարզ պատկերացնում էր հայերենի զարգացման հեռանկարներն ու հիմնական օրինաչափությունները։ Հայոց նոր լեզուն արդեն ուներ բավականաչափ կայունացած իր օրենքները, որոնք թեև չէին հակադրվում բարբառների հիմնական օրինաչափություններին, բայց չէին նույնանում նրանց հետ։ Գրական հայերենը և՛ իր բառապա-

¹ Խ. Նալբանդյան, *Իրկեր*, հատ. 3, էջ 326։

² Նույն տեղում, էջ 197։

³ Նույն տեղում, էջ 208։

⁴ Նույն տեղում, հատ. 4, էջ 195։

⁵ Նույն տեղում, հատ. 3, էջ 212։

շարով, և՛ քերականությամբ ուրվագծվել էր և ունեւր իր կանոնները, որոնք պարզ տեսնում էր Նալբանդյանը և այդ պատճառով էլ պահանջում էր շտտնահարել այդ կանոնները և դրանք շփոխարինել գրաբարի կամ բարբառներից որևէ մեկի կանոններով:

Սակայն, ընդգծելով գրական հայերենի ինքնուրույն մշակման անհրաժեշտությունը, նա չէր բացառում գրաբարի և բարբառների լեզվական իրողությունները օգտագործելու հանգամանքը: Բայց այդ հարցում ևս նա հատուկ մոտեցում ու սկզբունք ունեւր: Նա ճիշտ կերպով գտնում էր, որ առանձին բարբառը ղեկվի մշակման համար կարող է միայն իբրև ֆոն ծառայել¹, իսկ ամբողջությամբ չի կարող արմատներ արձակել և դառնալ գրական ընդհանուր լեզու. այդ պատճառով էլ գրաբարից և բարբառներից պետք է վերցնել բառեր և քերականական այնպիսի ձևեր, որոնք չեն հակասում նոր հայերենի քերականության կանոններին: Առանց այդ փաստերի ընդունմանը նոր հայերենը չի կարող անարգել հարստանալ և կատարելագործվել, որովհետև հայ ժողովրդի տարբեր հատվածները դարերի ընթացքում մշակել են իրենց բարբառը, որոշ բառեր կամ ձևեր, որոնք անհրաժեշտ են նոր լեզվին:

Մ. Նալբանդյանը ճիշտ կերպով գտնում էր, որ հայ գրագետը նոր գաղափարների համար անհրաժեշտ բառեր ու ձևեր մշակելիս, ամենից առաջ նկատի պետք է ունենա հայ ժողովրդի լեզուն իր բոլոր ճյուղավորումներով, որովհետև ժողովուրդը մի միասնական օրգանիզմ է, որի անդամները կապված են միմյանց իրենց հոգեկան կերտվածքով ու սովորություններով և հեշտությամբ կարող են յուրացնել այն բառերն ու ձևերը, որոնք հայերենի այդ կամ այն բարբառում են միայն գործածվում: Ավելի լավ է հեղինակը վերցնի ժողովրդի մեջ արդեն գործածական բառերն ու ձևերը, «քան թե նստի բառ արհեստակ, ձև շինե, կամ այս ու այն ազգից մտրա. որ իր անսովորությամբ կամ օտարությունամբ գուցե բնավ չի պատկաստվի էլ ազգի լեզվի վրա: Վերստին կրկնում ենք, մինչև բոլոր գավառական բարբառներից ճամփաներ չբացվեն դեպի գրական լեզվի կենտրոնը, սա ոչ միայն չի կարող ծաղկել և ուժ առնելով հանրական խորհուրդ ունենալ ազգի համար, այլ կամ մի զավառի կը ստրկանա, կամ չորցած, սատկած, ամուլ ու անպտուղ կմնա, երկու դիպվածումն էլ լեզուն հանրականության խորհուրդը կորցնելով ազգին համար կը լինի չեղածի պես, իսկ ինքը ազգը կենդանի — գրական լեզվի կարոտ»²: Իսկ երբ ժողովուրդը չունի ժամանակի քաղաքական և հասարակական կյանքն ու նոր գաղափարներ արտահայտող բառեր, պետք է դիմել օտար լեզուներին և նրանցից առնել անհրաժեշտ տերմիններ: Հայոց լեզվի զարգացման ընթացքում միշտ էլ օտար լեզուներից վերցվել են բազմաթիվ բառեր և յուրացվել. օտար անհրաժեշտ բառերից չեն խուսափել մեր նախնիքը և այդ ոչ թե թուլացրել, այլ ուժեղացրել է հայերենը, որովհետև ղեկվի հարստությունը բառերով է, նոքա են այն ամանները, որոնց միջնորդությամբ մերմիտքը հասնում է ուրիշին»³: Սակայն փոխառված բառերը նույնպես պետք է ենթարկվեն հայերենի օրենքներին և մտցվեն հայերենի մեջ ընտրողաբար, միայն այն դեպքերում, երբ նրանց պահանջն ու անհրաժեշտությունն են ղգացվում:

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 4, էջ 202:

² Նույն տեղում, հատ. 3, էջ 313—314:

³ Նույն տեղում, էջ 213:

Մ. Նալբանդյանը գրական հայերենի մշակումը չէր պատկերացնում նաև առանց գրաբարի իրողությունների օգտագործման: Սակայն այս դեպքում էլ նա պահանջում էր գրաբարից վերցրած լեզվական փաստերը ենթարկել գրական հայերենի օրենքներին: Իսկ որպեսզի այդ հնարավոր լիներ, անհրաժեշտ էր համարում վերցնել այնպիսի ձևեր կամ բառեր, որոնք չհասկանալի աշխարհաբարի բաղդասության օրենքներին, այսինքն՝ անհասկանալի շմեյի ժողովրդին: Նոր լեզուն կատարյալ չէ, նա շատ բառեր չունի, որովհետև այդ բառերի գաղափարը չի ունեցել ժողովուրդը. անհրաժեշտ է այդ նոր գաղափարների համար վերցնել բառեր ինչպես բարբառներից, նույնպես և գրաբարից, բայց հին լեզվից վերցրած բառերը չպետք է հին ձևով օգտագործել, չպետք է ենթարկել հին լեզվի օրենքներին, ստրկանալ հին լեզվի կեղևին, այսինքն՝ ժողովրդական լեզվին հարազատ՝ «կենդանացնելու, գրելու, կանգնելու, նստելու և այլն ասելու տեղ, գրել կենդանացնելու, դրելու, կանգնելու, նստելու և այլն»¹: Այդպես վարվելով հեղինակը կամա թե ակամա պաշտպանում է հին լեզվի հոլովման կանոնները, շարահյուսության օրենքները, իսկ «հին լեզվի բաղդասության իրավունքը պաշտպանելով»՝ նա փաստորեն կանգնում է «նոր լեզուն սպանելու և ժամանակի և պատմության ուղղեն արած պրծած ազդեցությունները ուրանալու»² ուղուն:

Մ. Նալբանդյանը, ապացուցելով գրական նոր լեզուն ինքնուրույնաբար մշակելու անհրաժեշտությունը, գտնում էր, որ այդ մշակման խնդիրն այն է, որ լեզուն այնպիսի հունով առաջ տարվի, «որպեսզի նա հասնի դուրըմբռնելի բարոյական գործիքի աստիճանին, որպեսզի նա քիչ թե շատ բանիմաց գավառացուն մատչելի լինի և դրանով գիտության համար դուրանցանելի ուղի բանալ, առանց որի ամեն մի լուսավորություն և ամեն մի ազատագրում (ЭМАНЦИПАЦИЯ) անիմաստ է»³: Այդ նոր լեզուն այժմ չի կարող դառնալ ընդհանուր խոսակցական լեզու, բայց նա հասկանալի պետք է լինի ողջ հասարակությանը, հենց այդ էլ կլինի առաջին քայլը մեր նոր լեզվի մշակման մեջ. «Հասկանալն առաջին քայլն է, ինչ որ ներկա սերունդը կհասկանա, այդ աքցանով էլ չի կարելի պոկել հաջորդ սերնդից»⁴: Մ. Նալբանդյանը գիտակցում է, որ լեզվի մշակման գործը մի մարդու և ոչ էլ մի սերնդի աշխատանքով կարող էր ավարտվել: Նալբանդյանը նշում էր, որ լեզվի մշակումը սերունդների գործ է, թե ինքը չի անհանգստանում այն բանից, որ կարճ ժամանակում լեզուն չի հզվել ասենք այնպես, ինչպես եղել է գրաբարը և այդ նպատակն էլ չի հետապնդում, որովհետև էականը ոչ թե այդ, այլ լեզվի մշակման ուղղությունը նշելու հարցն է. «Ներկա միջոցներով այժմ հնարավոր չէ պահանջել, որ նկարի յուրաքանչյուր առանձին վերցրած դեմքը նկարված լինի դերագանց կերպով. իմ նպատակն այն է, որպեսզի յուրաքանչյուր դեմք իր տեղում լինի և իր բնական դիրքով: Ինչ վերաբերում է նրանց նրբագեղությանը կամ արտահայտչությանը՝ դա ժամանակի գործն է»⁵: Ինչպես երևում է շարադրածից, Մ. Նալբանդյանը հայոց գրական լեզվի մշակման մասին ունի կուռ և հետևողական տեսակետներ, որոնք հանդում էին հետևյալին. ա) գրական հայերենը մշակել ինքնու-

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 3, էջ 199:

² Նույն տեղում, էջ 184:

³ Նույն տեղում, էջ 199:

⁴ Նույն տեղում, էջ 184:

⁵ Նույն տեղում, հատ. 4, էջ 202:

րույնաբար, առանց ենթարկելու այն ո՛չ բարբառների և ո՛չ էլ դրաբարի օրինա-
չափություններին, բայց օգտագործել նրանց լեզվական իրողությունները,
հատկապես բառապաշարը. բ) գրաբարից, բարբառներից և օտար լեզուներից
վերցված բառերը և քերականական ձևերը ենթարկել նոր լեզվի զարգացման
օրինաչափություններին, գ) հայերենի մշակման ընթացքում միշտ նկատի ու-
նենալ ժողովրդին հասկանալի մնալու պահանջները, շոտահարել ժողովրդի
իրավունքները, զիտակցել, որ անհատը կոլեկտիվից դուրս չէ և չի կարող ըն-
կերություն պահանջներին հակառակ վարվել ու նոր լեզվին ցանկացած ընթաց-
քը տալ:

Նալբանդյանի լեզվագիտական հայացքները չէին հակասում նրա լեզվա-
յան պրակտիկային. նա, ելնելով «ժողովրդի սրտի և հոգու վրա» իր լեզվով
ներգործելու սկզբունքից՝ ընտրում էր այնպիսի բառեր ու դարձվածքներ, որոնք
լրիվ չափով ժողովրդին հասկանալի լինելուն զուգընթաց՝ որևէ բարբառի միայն
հատուկ չէին, նա օգտագործում էր ժողովրդական լեզվին հատուկ ոճեր ու
դարձվածքներ և բացատրում իր մտքերը ոչ թե «եվրոպաբար», «գրաբարին»
«քան թե ժողովրդական բարբառին» մոտ լեզվով, ինչպես այդ կատարում էր
Ս. Նազարյանցը, այլ «նոր և կենդանի լեզվով», որ կարողանար «կամուրջ բա-
նալ ազդի բանականության և դիտության գաղափարների մեջ»¹: Այդ պատ-
ճառով էլ նրա ստեղծագործությունների լեզուն տարբեր է Նազարյանցի և
ժամանակի՝ այլ գործիչների լեզվից ոչ միայն իր նպատակասլացությամբ, հա-
տու և դիպուկ արտահայտություններով, այլև ոճական այնպիսի հնարանքներով,
որոնք նրա լեզուն ինքնատիպ դարձնելու հետ՝ մոտեցնում էին ժողովրդական
լեզվին, հաղորդում են նրան համ ու հոտ, հյութեղություն ու թարմություն:
Ահա մի քանի օրինակներ՝ «լեզուն ոսկոր չունի» (հ. 2, էջ՝ 369), «ոչ համ է
տեսել նրանից և ոչ հոտ» (հ. 2, 802), «շեն տուն հարս կը գնա» (հ. 2, 67),
«հալած յուղի տեղ ընդունել», (հ. 2, 144), «բանալ ընթերցող հասարակության
աչքը» (հ. 2, 144), «ձեռք ու ոտք ստանալ» (հ. 2, 149), «քացի տալ» (հ. 2,
296), «ով սև հագավ և կամ ով կանաչ ու կարմիր» (հ. 2, 297) և այլն:

Նալբանդյանն իր ասածը ավելի տպավորիչ դարձնելու համար օգտագոր-
ծում էր նաև հոմանիշ բառերի կրկնության միջոցը. օրինակ՝ «յուղ ու ձուռ ու-
նենալով՝ կարող էր հյուր և արյուն դառնալ» (հ. 2, 409), «հայոց հին լեզուն
հնացած հաց է արդեն և 1300 տարի է, որ թխած է, իսկ նոր լեզուն ամենայն օր
եփվում է, ջերմ է և սննդաբար. ուստի սորանով շատ հեշտ կլինեն կերակրել
հայոց ազգի սոված հոգին և սա ավելի հյութ ու արյուն կդառնար նորա մեջ,
քան թե այն շորացածը և քարացածը, որ չունի յուր մեջ այն կենդանական մա-
սերը»: «Ով ականջ ունի լսելու թող լսե, պատճառ որ ասվում է լսվելու հա-
մար» (հ. 2, 407), «չավիել և կշռել» (հ. 2, 401), «դանակով կտրած բաժանած»
(հ. 2, 140) և այլն: Ժողովրդական լեզվում գործածական այդ դարձվածքներն
ու ոճերը զեղեցկացնում են, դիպուկ ու նպատակասլաց են դարձնում նրա
խոսքը: Սակայն այդ բոլոր դեպքերում նա ելնում էր լեզուն ինքնուրույնաբար
մշակելու հիմնական սկզբունքից և երբեք բարբառային ձևերը չէին անա-
ղարտ դրությամբ չէր մոծում գրական հայերենի մեջ: Այդ խստապահանջու-
թյունը նա ցուցաբերում էր, ինչպես տեսանք, նաև ուրիշների գրվածքի լեզվի
նկատմամբ: Նա դատապարտում էր Պոռչյանին, որը հատկացուցիչը մի տե-

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 3, էջ 404:

զուրկ նոր լեզվին հակառակ վերջադաս էր դրել, պախարակում էր նրան նաև այն դեպքում, երբ գործածել էր բարբառային ձևեր: Նա գտնում էր, որ յուրաքանչյուր հեղինակ մի բան գրելու ժամանակ պետք է նայի, որ իր լեզուն ու ոճը հարթություն ունենան և մի կանոնով առաջնորդվեն, իսկ «առանց կանոնի» առանց համակարգության, երբեմն արևելք նայելով և երբեմն արևմուտք, լեզուն դառնում է մի մածնաբրդոշ, էլ դժվար է այնուհետև հավատալ, թե այդ լեզվով գիրք կամ օրագիր հրատարակելը կարող էր ժողովրդի խոսած լեզուն մաքրել, մշակել, կամ նորա վրա ազդեցություն ունենալ¹: Նախքան դյանը հայոց լեզվի հնչյունաբանության, ձևաբանության և այլ իրողությունների մասին նույնպես անում է մի շարք նուրբ դիտողություններ, որոնք մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը:

Այսպիսով, նախքան դյանը ամբողջ խորությամբ ըմբռնեց գրական հայերենի անհրաժեշտությունը, ճանաչեց նրա գեղեցկությունն ու առավելությունները և պայքարեց նրա ինքնուրույնության, նրա ազգային առանձնահատկությունների ամրացման, նրա մշակման ու զարգացման համար:

Նշելով իր ձևավորման պրոցեսում գտնված հայոց սովորյալ լեզվի զարգացման հեռանկարները՝ նա բացահայտեց աշխարհաբարի կենսունակ կանոնները և դրանց պահպանման մեջ տեսավ աշխարհաբարի հետագա զարգացման գրավակներ:

Թուս առաջավոր մտածողների նման նա մայրենի լեզվի զարգացումը չէր անջատում դրականության զարգացումից, և դրանց առաջընթացի գրավակներ տեսնում էր հասարակական մտքի և հասարակության զարգացման մեջ: Նա այդ դրույթներից ելնելով գտնում էր, որ հայ հասարակության մտքի ձևավորման ու զարգացման համար խոշոր նշանակություն ունեն գրական հայերենը և հայ գրականությունը:

Նա պայքարում էր հայոց լեզվի քերականությունը հին լեզվի քերականությունը ենթակա դարձնելու, ինչպես նաև լեզվական սահմանափակ պոլիգլոտի դեմ՝ պաշտպանելով այն կարծիքը, ըստ որի ոչ թե քերականական պատրաստի նորմաներին պետք է համապատասխանեցնել լեզուն, այլ քերականության նորմաները պետք է որոնել կենդանի լեզվի մեջ: Քերականական ձևերի ու նորմաների կայունացումը, ինչպես և ամբողջ լեզվի զարգացումը նա կապում էր ժողովրդի, նրա կուլտուրայի զարգացման հետ: Այդ պատճառով էլ անհաշտ պայքար էր մղում բոլոր նրանց դեմ, որոնք արհամարհում էին հայերենի քերականական կանոնները և փորձում էին շեղել հայերենի զարգացման ընթացքը:

Նա հայոց լեզվի հետագա մշակումը, հարստացումն ու կատարելագործումը զուգակցում էր ռուսերենի մշակման ու կատարելագործման փորձի հետ, դրնելով, որ հայերենը պետք է օգտվի ռուսերենի բառապաշարի անսպառ զանձարանից՝ ինչպես նոր բառեր կազմելու, նույնպես և պատրաստի տերմիններ օգտագործելու համար:

Այդ բոլորը նախանդյանին դարձրին հայոց սովորյալ լեզվի մշակման ու կատարելագործման համար պայքարի ելած սերնդի մեջ ամենահետևողական մարտիկը և շրջահայաց տեսաբանը:

¹ Մ. Նախանդյան, Երկեր, հատ. 3, էջ 208: